

ժամանակ շատ կը պատահի երբ տեղ մը սկսի. և ահա հետզհետէ ազդեցութիւնն մօտակայ տեղերու կը տարածէ. կրնայ այն ժամանակ լուսնի ազդեցութիւնն նպաստել, սակայն ոչ է բուն պատճառ. Արդ ո՞վ որ քննած է երկրիս խորը, այնպիսին գիտէ և կրնայ իրաւամբ ըսել՝ թէ բուն պատճառն ուսկից է. շոգին որքան զօրուոր է, ահաւոր երկրաշարժներուն նայելով, պիտի ըսէ թէ շոգւոյ զօրութենէ վեր է այս. երազութիւն քորժի շոգւոյ ընթացքէն աւելի է, որով այլ պատճառ փնտռելու սկզբընական, այն է գազերու ազդեցութիւն:

Եւ յիրաւի ապացոյց առ այս՝ մատնանիշ կ'ընենք մեծ ու փոքր ածխահանք. որոնք ոչ այլ ինչ են՝ բայց եթէ ահաւոր ընդունարանք հրաբուխներու, եթէ յանկարծ բռնկելու ըլլան, և այս մեծ ածխահանքէն ելած գազին հոսանքն եթէ յանկարծ ի ձեռն ելել տրականութեան այլ գազի հետ միանայ ինչ կըլլայ. եթէ միացումն ածխահանքի մէջ կատարուի, ահա հրաբուխ, իսկ եթէ ածխահանքէն դուրս, ահա սասանութիւն միայն:

ԱՇԽԱՐՀԻՍ ԲԱՐՁՐԱՊՈՅ ԾԱՌԵՐՈ

Փանի որ գաղափար չունինք բարձրահասակ ծառոց, կը կարծենք թէ աշխարհիս ամենէն բարձր ծառերն են սօսին, կնձին և խորհրդաւոր մայրն. այլ մինչ պարզ աչք մը տանք անկարծանական գրոց էջերուն, յայտնի կը տեսնենք՝ թէ կան ծառեր որ մեր բարձր կարծածներէն բարձրագոյն են, ինչպէս Ուելլինգտոնիա, Թագաւորական Եւկալիպտոս և սեղուններն: Սօսին՝ այս վսեմ ու գեղանի ծառն, որ ամենէն բարձրն կը կարծուի մինչև 65-80 տարի կրնայ տեսել, և սովորաբար 20 մետր կը բարձրանայ, տեղ տեղ ալ աւելի: Աւիոյ մէջ 25 մետր, յիսուլիա 35, 'ի Փանատա 40, բայց ամենէն շատ Հայաստանի պարարտ հողին վրայ՝ և մինչև 55 մետր, որոնցմէ մին տեսեր է բնապատումն

Բեցեղի. յՈրդուատ Գողթանի մէջ, և զոր կը համարի սօսեաց ամենէն բարձրագոյնն. ցօղունը զափազանց լայն է և մէջ կողմէն ձեղքաւ, այնպէս որ ձևացած է մի տնակ ուր հինդ հոգի հանգիստ կրնան լուծակ գարներ:

Կնձին հարերով կը տեսէ, կը բարձրանայ 30-35 մետր: Մայր լիբանանու բարձունքը զարդարող ծառը առ առաւելն 35-40 մետր կը բարձրանայ: Ստոնք լաւագոյն է բնութեան միջահասակ ծառերն համարել, իսկ բարձրագոյն զԵւկալիպտոս, զՍեգունենի և զՈւելլինգտոնիա:

Յետինս կը պահուի Գալիֆօրնիոյ մէջ, և բրգաձև սիբուս ծառերէն մին է, բարձրութիւնն 135 մետր, չլիպատը 10-11 մետր և ոչ միայն բարձրութեամբն այլ նաև իւր երկարակեցութեամբ նշանաւոր է, կ'ապրի ամբողջ չորս դար:

Կրկնորդ հսկայագօրն սեգունենի, է ծառ կոնարբի բնիկ հիւսիսային Ամերիկոյ Գալիֆօրնիոյ և Սեքսիլոյի, չլիպատն է 44 անգ ղիական ոտք (14 մետր) իսկ բարձրութիւնը 128-140 մետր:

Եւկալիպտոսը ամենէն բարձրահասակ ծառերն են մրտենեաց ցեղէն, մինչև ցարդ 30 տեսակ գտնուած են, մին քան գմիւսն բարձրագոյն և խիստ օգտակար: Հինդ 20 տարի է որ Աւստրիոյ մէջ գտնուեցաւ հսկայաձև Եւկալիպտոս մի որոյ բարձրութիւնն 150 մետր է, իսկ չլիպատը 25մ: Ասկից զատ կան ուրիշ երեք նշանաւոր եւկալիպտոս, միոյն բարձրութիւնը 415 ոտք է, միւսին 420, երրորդին որ և կոչի յազաւորական Եւկալիպտոս 157մ. ահաւաստիկ աշխարհիս ամենէն բարձրահասակ ծառն:

Բուսոց դասուն մէջ ևս կան բարձրահասակներ, ինչպէս են այլ և այլ տեսակ պատատուկներն Յիրաւի որչափ հետաքրքրական պիտի ըլլար՝ եթէ ճշդիւ ծանօթութիւն ունենայինք ստոնք բարձրութեան վրայ: Բնապատումը գտեր են պատատուկներ որոնք առ նուազն 150 մետր երկայնութիւն ունին:

Կոյմբիոյ մերձն 'ի կղզին Սէլուն անգղիացիք հաստատներ են տնկարանական թան. զարան մի՝ ուր կը պահեն 130 մետր բարձրութեամբ հնդկեղէզն, և մինչև անգամ 200 մետր կը բարձրանայ եթէ ժամանակէն առաջ չի կտրեն: Բանեանց թղզներն * աշխարհիս ամենէն բարձրահասակ ծառն պիտի ըլ-

* Սոյն ծառը կոչի նաև Բիւնի-Բլիէ բոցն ունիք բանեանց թղզն էր Կոլոնի, Բանեան Բանիան աղան. զաւորը անոնց սակ կենսաբուն համար:

լար՝ եթէ փոխանակ ցօղունին շարունակու-
թիւնը վեր բարձրանալու վար չի կախուէր:
Անգղիական Հնդկաստանի մէջ կան այժմ այս
ծառերէն՝ յորոց միոյն ճիւղաւորութիւնը չա-

փելով տեսեր են որ՝ եթէ՛ տոյն ծառը իւր ճիւ-
ղերը դէպ ՚ի վեր բարձրացնէր 600 մետր
բարձրութիւն պիտի ունենար:

ՔԱՂԿԵԴՈՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՒ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍՆ

« Երէկ չէ մէկալ օր (5 փետր.), բարե-
կենդանի առթիւ, երաժշտական մեծ հանդէս
Մեծ. Մխիթարեան Հարց վարժարանին մէջ
ի Մօսա Պոռնու: Զուարճութիւն աշակերտ-
ներու և ծնողաց համար: Թատերական և
երաժշտական ակումբին ծրագիրը կազմուած.
էր ընտրելագոյն կտորներէ: Նախ սկիզբը,
վարժարանին փողահարաց խումբը հնչեցուց
եռանդուն աշխուժով Համիտիէ քայլերգը:
Պաղղիերէն Փօլ Լանզուէ փղորկի կատակեր-
գական թատերակութիւնը քաջալու ներկայա-
ցուցին Ունճեան, Հ. Գեորգեան, Լիմոնճեան,
Ճէնտէրէճեան, Սէֆէրեան, և այլն, աշա-
կերտները: Գաշնակի համար քառաձեռնի
կտոր մը, Կրիզի Նորիկեան կայրը, զոր
զարկին Քարիքէօրուլօ վարպետը և Զարմայր
Եսայեան աշակերտը, շարժեց միաձայն ծա-
փահարութիւն:

« Սիլվիօ Քարիքէօրուլօ աշակերտը (վար-
պետին օրդին), երգեց Պարպիկի տի Սիլվի-
յիային Տիկարոյի մուտքին առանձնեզր,
խիտ եռանդեամբ և խանդով: Կոան Վիայի
Պառանքեան պարը, երկ Քարիքէօրուլօ վար-
պետին, եղաւ հանդիսին նշանաւոր կէտը:
Ուսուցիչ և աշակերտք ընդունեցան ունկըն-
դիրներուն կողմանէ Ներմազին ուրախակցու-
թիւններ, այս անայթաք երգեցողութեան
համար:

« Նշանակեց Նաւ, հայկական լեզուով
Տաքոս Թամարիկոս անուն գաւեշտը, որուն
մէջ նշանաւոր հանգիսացան Պճնճեան և
Դեորգեան աշակերտները: Երաժշտական
հատուածներուն մէջ էին, Գարմեն՝ զոր վար-
ժարանին փողահարաց խումբը լսեցողը, Պար-
պիկի տի Սիլվիյիա՝ գաշնակի և իռթակի
վրայ Գ. Դաւիթեան և Եսայեան աշակերտ-

ները: վերջին կայօրը, փողահարները:

« Երաժշտութեան նուագածուններն էին՝
Վէվէ, Գամիլլէրի, Քարիքէօրուլօ, Պալտի:
Երգատները՝ Մաքրիտէս և Յ. Էմիրզէ մաս-
նակեցեցան աղնուութեամբ այս դպրոցական
նուագահանդէսին, որ ամէն մասամբ շատ յա-
ջող գնաց:

« Երեւել և ընտիր բազմութիւն մը ծնողաց
և հրաւիրեալներու փութացեր էին Մեծ.
Մխիթարեան Հարց սիրալիր հրաւերին: Ըն-
դունելութիւնը կատարուեցաւ քաղցր մար-
դասիրութեամբ: Սեղան առատօրէն պատ-
րաստուած: Մէկ խօսքով, գեղեցիկ զուար-
ճութիւն, որ պատիւ կը բերէ այս լաւ կա-
ռավարուած հաստատութեանը, ինչպէս նաեւ
ուսուցիչներուն՝ որ հոն կը յաճախեն:

« Պաղղիերէն արտասանող աշակերտներուն
վարժ խօսուածքը, ունկնդիրներուն կողմանէ
հանդիսական դիտողութեան նիւթ եղաւ: Մրա-
զիրն և հրաւիրեալներու թիւը չափաւոր էր:
Հանդէսն իրականապէս օգտակար եղաւ ա-
շակերտներու ծնողաց — առաջին շահ ունե-
ցողները: Այս օրինակիս պէտք է հետեւին
ուրիշ հաստատութիւններն ալ, ուր, նոյն-
օրինակ պարագաներու մէջ, ամէն եկողին
առիւ զուռները կը բացուին, որ յէջում մը
չէ »:

* *

Այս պարզ, այս մարդավարի յօդուածս,
որ Բազմակէպի խմբագրութիւնը հոս վերը
էր Թարգմանէ, Մօնիդէտ Օրիանդալէն է.
կայն գրողը՝ նոյն իսկ անոր խմբագրապետն
է, Պ. Գոլլարօ, ներկայացմանը ականա-
տեսներէն մէկը: Նմանօրինակ ռոճով մը, և